ԵՄ ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՎԻՆԻՆԳ ԾՐԱԳԻՐ

Գործողություն 2.7

Միգրացիոն վիճակագրության մեթոդաբանություն և էլեկտրոնային տվյալների առավել շատ օգագործում *II*

Ժողովրդագրական վիճակագրություն

Երևան, 2017 թ. փետրվարի 6-10

STATISTICS DENMARK

Պարտադիր արդյունք

Սույն գործողության հետ կապված պարտադիր արդյունքը՝ ՊԱ 3

Միգրացիոն վիճակագրության տվյալների հավաքագրման բարելավված մեխանիզմներ, ընդգրկվածություն, յուրաժամանակություն և որակ

Չափանիշներ

- Միգրացիոն վիճակագրության արդիականացված մեթոդաբանություն (2017թ.ապրիլ)
- ՀՀ ԱՎԾ աշխատակազմը վերապատրաստվել է միգրացիոն վիճակագրության գծով (2017թ. հուլիս)

Գործողության նպատակը և սպասվող արդյունքը 2.7

Նպատակ

- Տվյալների հավաքագրման վերանայում և SS հարցերի հետ կապված անհրաժեշտ վերանայումների վերաբերյալ քննարկում
- Մեթոդաբանության վերանայման շարունակություն

Սպասվող արդյունք

- Առաքելության զեկույց, որում ներկայացված են առաջարակություններ՝տվյալների որակի, մեթոդաբանության և տվյալների աղբյուրների օգտագործման բարելավումների վերաբերյալ
- Միգրացիոն վիճակագրության վերաբերյալ վերջնական գործողության համար աշխատանքային ծրագիրը սահմանված է.
  - 2.8: Հետևել ձեռքբերումներին և առաջարկությունններին փորձագետների հաջորդ այցելության համար (2017 թ. հունիսի 6-9)

Առաքելությունը հիմնականում կենտրոնացված էր հետևյալի վրա՝

- Բարելավելու միգրացիոն վիճակագրության մեթոդաբանությունը
- Քննարկել տեխնիկական մասնագրի նախապատրաստումը Հայաստանում միջազգային միգրացիոն վիճակագրություն արտադրելու համար
- Քննարկել ՏՏ –ի հետ կապված տարբեր հարցեր
  - Տեխնիկական աջակցություն և առաջարկություններ, թե ինչպես կարելի է միգրացիոն վիճակագրության արտադրման վիճակագրական գործընթացը դարձնել առավել արդյունավետ, և այլն:

Եզրակացություններ (1)

- Քննարկվել է ՀՀ նոր Ժողովրդագրական տարեգիրքը (հրապարակվել է 2016 թ. նոյեմբերի վերջին):

- Մեծ առաջընթաց և հաջողություն կա հրապարակման մեջ գլուխ 7 <<Միգրացիա>> կապված մեթատվյալների և սահմանումների, բացատրությունների հետ, ՀՀ-ում միգրացիոն վիճակագրության արտադրման համար տվյալների աղբյուրների ներկայիս իրավիճակի վերաբերյալ տեղեկատվություն և այլն:

- Անհրաժեշտ է որոշ պարզաբանումներ հիմնական ցուցանիշների ներկայացման վերաբերյալ միգրացիոն գործընթացների հստակեցման համար, հիմնականում 7-րդ գլխում:

Եզրակացություններ (2)

- Միգրացիոն վիճակագրության մեթոդաբանության արդիականացման աշխատանքը ճիշտ ուղղու վրա է և ծրագրի չափանիշին կհասնի վերջնաժամկետին (2017 թ. ապրիլ): Լավ աշխատանք է իրականացվել Ժողովրդագրական բաժնի կողմից:

- SS կենսապայմանների ամբողջացված հետազոտության հատուկ միգրացիոն մոդուլը հաստատվել է համաձայն նախորդ առաքելության ներկայացված առաջարկությունների:
  - Նոր բարելավված հետազոտության տվյալները նախատեսված են 2017 թ.-ի համար:
  - Հնարավոր է օգտագործել ՏՏԿԱՀ –ի հիմնական մոդուլը միգրանտների սոցիալ-տնտեսական բնութագրերի վերաբերյալ վիճակագրական տվյալների պատրաստման համար:

Եզրակացություններ (3)

- Քննարկվել է ՀՀ միջազգային միգրացիոն վիճակագրության արտադրման տեխնիկական մասնագրի նախագիծը:
  - Լավ աշխատանք է իրականացվել ՀՀ ԱՎԾ ժողովրդագրական բաժնի կողմից:
  - ԱԵ փորձագետների կողմից տրված մեկնաբանությունները և առաջարկությունները մասնագրի բարելավման վերաբերյալ հաշվի են առնվել:
  - Մասնագիրը կարևոր տեխնիկական փաստաթուղթ է և այն պետք է օգտագործվի և փոխանակվի 3 բաժինների միջև (Ժողովրդագրական, Տնային Տնտեսությունների և SS):

Եզրակացություններ (4)

SS վարչության հետ համագործակցությանն առնչվող հարցեր.

- Կա վտանգ, որ Ժողովրդագրական և SS բաժինների միջև հաղորդակցության անհարկի թյուրիմացությունները կարող են հանգեցնել որակի նվազեցման:
- Անհրաժեշտություն կա ժողովրդագրական բաժնի կողմից օգտագործվող առկա համակարգերի տեխնիկական մասնագրերի համար, որը կարող է բարելավել արտադրվող տվյալների որակը:
- ՀՀ ԱՎԾ –ի SS աշխատակիցները շատ պրոֆեսիոնալ են և կարող են աշխատել անվանական մակարդակի վարչական տվյալների հետ՝ միգրացիոն վիճակագրության արտադրման համար, սակայն ընդհանուր առմամբ վարչական տվյալների հետ կապված աշխատանքի ծավալի աճի պարագայում SS աշխատակիցները կարող են գեր ծանրաբեռնվել, ինչը կարող է հանգեցնել ուշացումների և որակի անկման:

Առաջարկություններ (1)

Առաջարկվում է, որպեսզի առկա համակարգերի տեխնիկական մասնագրերը պատրաստվեն ժողովրդագրության բաժնի կողմից՝ ՏՏ վարչության հետ խորհրդակցությամբ

Սա կօգնի հստակեցնել առկա տվյալների արտադրումը և վերացնել թույլ որակի տվյալների ստացման ռիսկը

Մասնագրերը փաստաթղթային ձևով ունենալը նաև կկրճատի և՛ ժողովրդագրության բաժնի և՛ ՏՏ վարչության նոր աշխատակիցների հարմարվելու ժամանակահատվածը

Առաջարկություններ (2)

- Առաջարկվում է ընդլայնել համագործակցությունը վիճակագրական բաժինների և ՏՏ վարչության միջև
- Առավել լավ արդյունքի և ՀՀ ԱՎԾ-ում թվային տվյալների արտադրման գծով արդյունավետ աշխատանքի համար առաջարկվում է ստանդարտացնել վիճակագրական բաժինների և ՏՏ վարչության միջև հաղորդակցությունը, մասնավորապես աշխատել հետևյալի վրա.
  - Ստանդարտացված պահանջագրեր՝ տեխնիկական մասնագրերի ռացիոնալացման համար
  - Վիճակագրական հետազոտությունների պատասխանատուները պետք է օգտվեն ստանդարտացված ձևերից, որպեսզի ՏՏ հետ հաղորդակցությունը հստակ լինի
  - Սա պետք է մշակվի վիճակագրական բաժինների և ՏՏ միջև համագործակցությամբ և հաստատվի ղեկավար մարմնի կողմից
  - Հաստատվելուց հետո տեխնիկական մասնագրերը հստակ են և կարող են օգտագործվել արտադրման մեջ թափանցիկություն, իսկ վերջնական վիճակագրական տեղեկատվության մեջ լավ որակ ապահովելու նպատակով

Առաջարկություններ (3)

- Հաշվի առնել, որ առավել մեծ ծավալի վարչական տվյալների օգտագործումը կպահանջի.
  - Առավել շատ ՏՏ մասնագետներ (ծրագրավորողներ)
  - ՏՏ մասնագետների համար վերապատրաստում MS Server-ի կառավարման և տվյալների հարցման համար
  - Վիճակագրական բաժինների և ՏՏ վարչության միջև ներքին հաղորդակցության առավել կառուցողական ընթացակարգ

- Վարչական տվյալները տիրապետողների հետ հետագա համագործակցությունը էական նշանակություն ունի ՀՀ ԱՎԾ համար՝ անվանական մակարդակի տվյալներ ստանալու առումով

- Վերապատրաստումը և եվրոպական “ռեգիստր երկրի” (զարգացած վարչական ռեգիստրներ ունեցող) ԱՎԻ ուսուցողական այցը մոտ ապագայում կարող է օգտակար լինել

Առաջարկություններ (4)

- ՀՀ ԱՎԾ մասնագետները պետք է վերլուծեն տարեկան միգրացիոն վիճակագրության տվյալներն առավել վաղ վերլուծելու հնարավորությունները (յուրաժամանակության բարելավում)
- Տարեկան հրապարակումներում ավելացնել ավելի շատ վիճակագրական տվյալներ և բնութագրեր (բացարձակ թվերով) արտագաղթյալների և ներգաղթյալների վերաբերյալ, ինչպես նաև օգտագործված ցուցանիշների սահմանումները (արտագաղթի/ներգաղթի ընդհանուր գործակիցները)
- Պատրաստել և հրապարակել մեթատվյալների փաստաթուղթը
- Հրապարակել միգրացիոն վիճակագրությունը կառուցվածքային մոտեցմամբ. միգրացիայի միտումներ, ապաստան, անկանոն միգրացիա, դրամական փոխանցումներ և այլն

Ճանապարհային քարտեզ և ժամանակացույց (1)

ՀՀ ԱՎԾ կողմից մինչև 2017թ. ապրիլի վերջին իրականացվելիք տնային աշխատանք.

- Ավարտին հասցնել միգրացիոն վիճակագրության վերաբերյալ մեթոդաբանության արդիականացումը՝ համաձայն լիտվացի փորձագետների կողմից արված առաջարկությունների

- SS վարչության հետ համագործակցությամբ ավարտին հասցնել Տեխնիկական Մասնագիրը՝ միջազգային միգրացիայի վիճակագրության արտադրման վերաբերյալ

Ճանապարհային քարտեզ և ժամանակացույց (2)

ՀՀ ԱՎԾ կողմից մինչև 2017թ. մայիս վերջին իրականացվելիք տնային աշխատանքը.

- Հաստատել ներքին գործընթաց SS բաժնի հետ համագործակցության համար տեխնիկական մասնագրերի մշակման և կանոնավոր արդիականացման գծով՝ ստանդարտացված համագործակցային փաստաթղթի հիման վրա
  - Բոլոր առկա համակարգերի համար պետք է առանձին մասնագրեր պատրաստվեն
- Մշակել փաստաթղթի նախագիծ՝ վիճակագրական ճյուղային բաժինների և SS վարչության միջև ներքին ստանդարտացված համագործակցության վերաբերյալ
- Կազմակերպել բարձր մակարդակի հանդիպում ՀՀ ազգային անվտանգության ծառայության հետ՝ անհրաժեշտ վարչական տվյալներին մուտքի հնարավորություն ստանալու համար